

առաքեցին ի քաղաքն Կոստանդնուպօլիս, եւ ծանուցին քաղաւորին Սուլթան Իպրահիմ խոնդաւորին, թէ այսօր ժամուանոց քաղաքաց եւ գեղօրէից, մաշիթաց եւ եկեղեցեաց աւերումն եղեւ» (Էջ 493):

Նոյնպէս «Վանայ քաղաքի խօջեմն առաքեցին առ խօջայ Ռոնիջանն՝ որ յաւուրսն յայնոսիկ ի Կոստանդնուպօլիս էր, հրաման առնուլ ի քաղաւորէն վասն վերսին ժնութեան աւերեալ վանօրէիցն եւ եկեղեցեացն, զոր եւ խօջայ Ռոնիջանն առեալ... ի քաղաւորէն եւ առաքեաց ի Վան առ խանայն, եւ նոքա սկսան շինել զեկեղեցիսն զքաղաքին, ... եւ զՎարազայ վանից: Եւ նախ Կիրակոս վարդապետն(1) որ էր առաջնորդ Վարազայ վանիցն՝ յանձն ետու շինել զժամատունն՝ զոր եւ շինեալ կասարեաց, եւ խօջայ Ամրխան զսուրբ Խաչի եկեղեցին, եւ Մարխաս Զալապի՝ զԱստուածամեծի եկեղեցին, եւ խօջայ Դիլանչին՝ զՍուրբ Սիօնի եկեղեցին, եւ խօջայ Յովհաննէան՝ զՍուրբ Նշանի եկեղեցին, Զայս եկեղեցիսն շինեցին՝ եւ մնաց բերդով եկեղեցին, եւ քառասուն աբելայից եկեղեցին եւ վանից պարիսպն եւ շինեցին շուրջանակի բովանդակ: Եւ կասարեցաւ շինումն ներքին Վարազայ վանացն՝ եւ այլ վանօրէից եւ եկեղեցեաց ...» (էջ 494):

*Անհաւատօլի է, որ այս բազմաթիւ վանքերուն և եկեղեցիներուն վերականգնութիւնը և նորոգութիւնը կարելի չգտնուի ըլլալ կատարել. ուստի՝ քննու*

(1) Կիրակոս վրդ. Աւանցցի, միեւնոյն ասեմ Աղբակի, Ս. Բարբողիմէոս վանքին ալ վանահայրն էր, որուն շինարար աշխատութիւններ կը բուէ նաեւ ուրիշ յիշատակարան մը (տես *Յուշակ Վասպուրականի*, էջ 268—270), Փիլիպպոս կր. Աղբակեցի օգնած է այս Կիրակոս վարդապետին անոր շինարար գործունէութեան նիւթապէս նպաստելով մասնաւորաբար Վարազի Ս. Գեորգ եկեղեցիի շինութեան ասեմ (Ս. Լեւոնեան, *Բիւզանդիոն*, ք. 1930):